ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«01» «օգոստոս» 2024 թ. № 310-Լ

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 54-Ն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ջերմոցային գազերի գույքագրման որակի ապահովման ընդհանուր ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի,
2. Հաստատել ջերմոցային գազերի գույքագրման տարեկան պլանը՝ համաձայն N2 հավելվածի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

8/1/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«01» օգոստոս 2024թ.

ք. Երևան

Հավելված N1

շրջակա միջավայրի նախարարի

2024թ. հունվարի -ի «01» N 310 -Լ հրամանի

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐԸ

1. Սույն ծրագրով և դրանից բխող տարեկան պլանով նախատեսվում է կարգավորել ջերմոցային գազերի (այսուհետ՝ ՋԳ) արտանետումների գույքագրման համար սահմանված որակի պահանջները՝ նպատակ ունենալով ապահովել գույքագրման համակարգի թափանցիկությունը, ճշգրտությունը, ամբողջականությունը, համադրելիությունն ու հետևողականությունը:

2. Սույն ծրագրում և դրանից բխող տարեկան պլանում կիրառվող հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 54-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված հասկացությունների իմաստը:

3. ՋԳ արտանետումների ազգային գույքագրումն իրականացվում է որակի ապահովման/որակի հսկողության (այսուհետ՝ ՈԱ/ՈՀ) ընթացակարգերի կիրառմամբ՝ համաձայն Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (այսուհետ՝ ԿՓՓՄԽ) ուղեցույցների:

4. ՈԱ-ն վերանայման ընթացակարգերի պլանավորված համակարգ է, ինչն իրականացվում է ՋԳ արտանետումների գույքագրման գործընթացում (կազմման/մշակման) ուղղակիորեն չներգրավված մասնագետների կողմից:

5. ՈԱ իրականացնում է շրջակա միջավայրի նախարարությունն ավարտված գույքագրման արդյունքների հիման վրա, որին հաջորդում են ՈՀ ընթացակարգերը, ինչի

համար պատասխանատու է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

6. ՈՀ գործընթացն իրականացվում է Որոշման հավելվածի 29-րդ կետով սահմանված ոլորտների փորձագետների կողմից՝ համաձայն ԿՓՓՄԽ ուղեցույցների ՈՀ ընթացակարգերի:

7. ՈՀ գործընթացը ներառում է նաև շրջակա միջավայրի նախարարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հուլիսի 6-ի N 719-Ա որոշմամբ ստեղծված Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի ընթացիկ վերանայումները: Խորհրդի աշխատանքային խումբը իրականացնում է ՋԳ արտանետումների ազգային կադաստրի (ազգային միտումների աղյուսակների)՝ նախագծի տեխնիկական վերլուծությունը:

8. ՈԱ-ը ներառում է ինչպես ՋԳ արտանետումների գույքագրման գնահատումները, այնպես էլ ՋԳ արտանետումների ազգային կադաստրի հաշվետվության կազմումը՝ առաջնորդվելով ստորև ներկայացված ընթացակարգերով.

1) անկախ փորձագիտական վերանայում, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել մեթոդաբանությունների կիրառման, գործունեության տեսակների տվյալների ընտրության և արտանետումների գործակիցների մշակման ու ընտրության հետ կապված տեխնիկական խնդիրները՝ հիմնված փորձագետների կամ կազմակերպությունների գույքագրման հետ կապված ոլորտներում իրենց գիտելիքների և փորձի վրա՝ կենտրոնանալով հիմնական և այն կատեգորիաների վրա, որտեղ տեղի են ունեցել մեթոդաբանական և տվյալների զգալի վերանայումներ:

2) ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի վերանայումն իրականացվում է ՋԳ առաջնային տվյալներ տրամադրող պատասխանատու մարմինների, կազմակերպությունների և ռեսպոնդենտների կողմից՝ սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված առաջարկությունները և դիտողությունները ստանալուց հետո.

3) սույն կետի 1-ին ենթակետում ամրագրված առաջարկություններ և դիտողություններ ներկայացնող մարմինը.

ա. առաջարկություններն և դիտողություններն ամփոփում է աղյուսակային տեսքով՝ կազմելով ամփոփաթերթ և նշելով ներկայացնող անձի անունը, կազմակերպության անվանումը, ոլորտը, մեկնաբանությունները/առաջարկությունները,

բ. սույն կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության մեկնաբանություններն/առաջարկություններն ուսումնասիրվում են իրականացնող մարմնի կողմից՝ փոփոխությունների կամ պարզաբանումների տրամադրման նպատակով,

գ. վերանայված ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագիծը սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված մարմնի կողմից ներկայացվում է շրջակա միջավայրի նախարարությանը:

4) ՈԱ ընթացակարգն ավարտվում է ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագիծը շրջակա միջավայրի նախարարության կողմից Խորհրդին ներկայացնելով և Խորհրդի կողմից վերջինիս հաստատմամբ, որից հետո Հայաստանի Հանրապետության ՋԳ ազգային կադաստրի հաշվետվությունը շրջակա միջավայրի նախարարությունը ներկայացնում է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարությանը և այնուհետև այն արխիվացվում է:

Հավելված N2

շրջակա միջավայրի նախարարի

2024թ. մարտի -ի «01» N 310 -Լ հրամանի

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԸ

N	Միջոցառում	Կատարող	Կատարման ժամկետ
1	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի ներկայացում	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա մայիսի 15-ը
2	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի վերանայում անկախ փորձագետների կողմից	Անկախ փորձագետներ՝ սույն հրամանի 8-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա հունիսի 10-ը
3	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի անկախ փորձագիտական վերանայման արդյունքում դիտողությունների վերացում	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա հունիսի 25-ը
4	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի շրջանառում առաջնային տվյալներ տրամադրող պատասխանատու մարմինների, կազմակերպությունների և ռեսպոնդենտների միջև	Շրջակա միջավայրի նախարարություն	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա հունիսի 30-ը

N	Միջոցառում	Կատարող	Կատարման ժամկետ
5	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի վերաբերյալ առաջնային տվյալներ տրամադրող պատասխանատու մարմիններից, կազմակերպություններից և ռեսպոնդենտներից կարծիքների հավաքագրում	Շրջակա միջավայրի նախարարություն	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա հուլիսի 10-ը
6	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի վերանայում՝ համաձայն առաջնային տվյալներ տրամադրող պատասխանատու մարմինների, կազմակերպությունների և ռեսպոնդենտների կողմից ներկայացված կարծիքների	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա հուլիսի 25-ը
7	Վերանայված ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության նախագծի ներկայացում Շրջակա միջավայրի նախարարությանը	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա հուլիսի 30-ը
8	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության ներկայացում Խորհրդին	Շրջակա միջավայրի նախարարություն	մինչև հաշվետվությունը ներկայացնելու տարվա օգոստոսի 15-ը
9	ՋԳ ազգային կադաստրի հաշվետվության ներկայացում ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարությանը	Շրջակա միջավայրի նախարարություն	ոչ ուշ քան հաշվետվությունը ներկայացնելու տարվա սեպտեմբերի 1-ը